

24 ԱՊՐԻԼԻ. ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱԳԱՆԻՆ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

# ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԱՅՑԵԼԵՑ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ

Ապրիլի 24-ին, 1915թ . Հայոց Մեծ եղեռնի զոհերի ոգեկոչման օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ այցելեց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Մեծ եղեռնի բյուրավոր նահատակների:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու թեմակալ առաջնորդներ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ:

Արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, պետական այրեր և օտարերկրյա դիվանագետներ:

*

* *

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագեց և քարոզ խոսեց Տ. Վարդան արք. Նավասարդյանը (տե՛ս էջ 89):

Պատարագի սրբազան արարողությունից հետո Մայր Տաճարի հարևանությամբ ի հիշատակ Եղեռնի նահատակների կանգնեցված Աղոթքի և ուխտի խաչքարի մոտ Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*